# ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵ

2023

## ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

- Պետական բյուջեն կառավարության տարբեր քաղաքականություններն ամփոփող կարևոր ծրագրային փաստաթուղթ է, որն արտահայտում է, թե կառավարությունը հանրային ռեսուրսները ինչպե՞ս է նախատեսում օգտագործել, ո՞ր քաղաքական նպատակների համար, ինչպիսի՞ հանրային ծառայություններ և ի՞նչ ծավալով են մատուցվելու, և ի վերջո, ինչպիսի՞ արդյունքներ են ապահովվելու հանրության համար:

- Պետական բյուջեն նախ և առաջ արտահայտում է հարկաբյուջետային քաղաքականությունը, որը կարող է համարվել արդյունավետ, եթե ապահովվում է հանրային միջոցների այնպիսի բաշխման և վերաբաշխման համակարգ, որը մի կողմից կերաշխավորի տնտեսության զարգացումը, մյուս կողմից՝ սոցիալական և անվտանգային կարիքների արդյունավետ հասցեագրումը:

- Հայտնի է, որ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղակիորեն ազդում է մակրոտնտեսական միջավայրի վրա, իսկ մյուս կողմից՝ տնտեսական զարգացումներն, իրենց հերթին, մեծ ազդեցություն ունեն կառավարության ֆինանսների վրա: Տնտեսական աճն ապահովում է տնտեսությունում ավելի մեծ եկամուտներ՝ հետևաբար հարկային եկամուտների աճ: Մինչդեռ, տնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է հանգեցնել հարկերի կրճատման, միաժամանակ՝ կառավարության սոցիալական ծախսերի պահանջի ընդլայնման և ֆինանսական բեռի ծանրացման:

- 2022թ. փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների բացասական ազդեցությունների հետևանքով ՌԴ-ից դեպի Հայաստան մարդկանց և կապիտալի աննախադեպ ներհոսքով, ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների ՀՀ տեղափոխմամբ, ինչպես նաև պատժամիջոցների հետևանքով որոշ երկրներից ՌԴ ներմուծման շուկայի սահմանափակումների հետևանքով ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման պայմաններում ՀՀ-ում 2022թ. համար սպասվում է 11% տնտեսական աճ, ինչը գերազանցում է կառավարության նպատակադրած տնտեսական աճի թիրախը:

- 2023 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրին համահունչ ուղղված կլինի թիրախավորված 7% տնտեսական աճի ապահովմանը՝ շեշտադրելով պետական ներդրումների մասնաբաժնի էական մեծացումը (կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում հասցնելով 5.9%-ի) և ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև՝ պարտքի կայունության պահպանմանը: 2023թ. հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա կունենա չեզոք ազդեցություն և միաժամանակ կխթանի ներուժային տնտեսական աճը:

- 2023թ.-ի պետական բյուջեի ցուցանիշները պլանավորվել են հարկաբյուջետային կանոններին ամբողջական համապատասխանության ներքո: Նպատակ ունենալով նպաստել տնտեսական աճի ներուժի բարձրացմանը և միաժամանակ ապահովել հարկաբյուջետային կայունություն՝ հարկաբյուջետային քաղաքականությամբ թիրախավորվել է էապես բարձրացնել պետական ներդրումների մակարդակը (այդ թվում պաշտպանության ոլորտին ուղղվող կապիտալ ծախսերի էական աճը) և միաժամանակ ապահովել ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազող միտումը:

- Պետական բյուջեի ծախսերը 2023թ-ին՝ 2022-ի սպասվող ցուցանիշի համեմատ կաճեն 15.3 տոկոսով: Ընդհանուր ծախսերի մոտ 21.1 տոկոսը կուղղվի կապիտալ ներդրումներին: Պետական բյուջեի ընդհանուր դեֆիցիտը (պակասուրդը), որն ըստ էության արտահայտում է կառավարության կողմից տնտեսություն ներմղված (պետական բյուջեի ծախսեր) և տնտեսությունից արտաքաշված (պետական բյուջեի եկամուտներ) միջոցների տարբերությունը, կկազմի ծրագրային ՀՆԱ-ի 3.1 տոկոսը:

- 2023 թվականին բարձր տնտեսական աճի պայմաններում, կառավարությունը նախատեսում է իրականացնել հարկային վարչարարության բարելավմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև

հարկային օրենսդրության բարեփոխումներ: Վերջիններիս արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շուրջ 0.5 տոկոսային կետով բարելավում:

- Իրականացվող զսպող դրամավարկային քաղաքականության և աստիճանաբար մեղմվող ամբողջական պահանջարկի պարագայում գնաճը, կարճաժամկետ հատվածում մնալով թիրախից բարձր մակարդակում, կսկսի աստիճանաբար նվազել՝ 2023 թ. ընթացքում մոտենալով իր նպատակային ցուցանիշին: Գնաճի նպատակային ցուցանիշից շեղման ռիսկերի դրսևորման պարագայում ՀՀ ԿԲ-ն համապատասխանորեն կարձագանքի:

- Որոշ շուկաներում արտաքին պահանջարկի աճով, ՌԴ-ում ՀՀ-ից արտահանվող ապրանքների շուկաների ընդլայնմամբ, զբոսաշրջության ու ներքին պահանջարկի աճի պայմաններում 2022թ. տեղի կունենա և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալների աճ: Առևտրային հաշվեկշռի և ոչ առևտրային բնույթի (աշխատավարձ և տրասնֆերտներ) դրամական փոխանցումների ՀՆԱ-ում դերի վատթարացմամբ պայմանավորված 2022թ. ընթացիկ հաշվի պակասուրդը փոքր-ինչ կվատթարանա՝ մոտենալով ՀՆԱ-ի 4.2%-ին: 2023 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կշարունակի խորանալ:

**Աղյուսակ 1. 2023թ. պետական բյուջեի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները (% արտահայտությամբ)**

| Չափորոշիչ | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|---|---|
| | Փաստ | Փաստ | Փաստ | Սպասում | Ծրագիր |
| Տնտեսական աճ | 7.6 | -7.2 | 5.7 | 11.0 | 7.0 |
| Հիմնական միջոցներում ներդրումներ[1]/ՀՆԱ | 15.8 | 17.8 | 18.3 | 18.5 | 20.4 |
| Սպառում/ՀՆԱ | 96.0 | 90.3 | 87.8 | 86.2 | 84.4 |
| ՀՆԱ դեֆլյատոր | 1.0 | 1.8 | 6.9 | 7.0 | 5.0 |
| Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), % | 0.7 | 3.7 | 7.7 | 8.5 | 3.6 |
| Գնաճ (միջին), % | 1.4 | 1.2 | 7.2 | 8.1 | 5.6 |
| Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ | -1.0 | -5.4 | -4.6 | -2.5 | -3.1 |
| Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ | -7.3 | -3.8 | -3.7 | -4.2 | -5.7 |

[1]Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019թ.-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ՝ վիճակագրական սխալները ներառվում են դրա մեջ:

## ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

### ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական քաղաքականությունը խարսխվում է չորս հիմնական հենասյուների վրա, դրանք են՝

Տնտեսական զարգացման նախաձեռնություններում կառավարությունը կարևորում է՝ քաղաքացիների նորարարական ներուժի, ստեղծագործելու ձիրքի և գործարար նախաձեռնողականության խրախուսումը, օտարերկրյա ուղղակի ներդրուրերի (ՕՈՒՆ) ներգրավումը և տեխնոլոգիաների կլանումը:

Տնտեսական քաղաքականությունը խարսխվում է հետևյալ հենասյուների վրա, դրանք են՝

- Արտադրողականության և մրցունակության բարձրացումը,
- ՓՄՁ ոլորտի հզորացումն և մրցունակության բարձրացումը,
- Արտահանման շուկաների մատչելիության ապահովումը,
- Ներդրումային և գործարար միջավայրի շարունակական և կանխատեսելի բարելավումը:

### ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի գծով 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 600,000.0 հազ. դրամ: Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում նպաստել տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորումը, վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացմանը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացմանը: Աջակցել ներդրողների սպասարկմանը, օտարերկրյա ներդրողների ներգրավմանը և հետներդրումային սպասարկմանը:

- ՓՄՁ հատվածի կշիռը ՀՆԱ-ում 2021 թվականին կազմել է 27.7 տոկոս, իսկ մինչև 2026 թվականը կկազմի 55 տոկոս:
- Ապրանքների արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը 20.5-ից կաճի և 2026 թվականին կկազմի

23.3 տոկոս:

- Մշակող արդյունաբերության դերը մինչև 2026 թվականը ՀՆԱ-ի մեջ հասցնել առնվազն 15%-ի:
- Օտարերկրյա ուղղակի ներդրումների կշիռը ՀՆԱ-ում մինչև 2026 թվականը հասցնել 6%-ի:
- Հայաստանի գրավչությունը կբարձրանա. զբոսաշրջիկների քանակի տարեկան աճը կկազմի առնվազն 10 տոկոս:
- Նախատեսվում է գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին 240 գործարար ուսուցողական, 100 ֆինանսական և ներդրումային աջակցության տրամադրում:

Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց միջոցառմանը նախատեսվում է հատկացնել 4,000,000.0 հազ. դրամ: Միջոցառմամբ նախատեսվում է ՀՀ տարածքում մասնավոր հատվածի ներդրումների խրախուսում, դրանց համար բարենպաստ պայմանների ստեղծում, մասնավորապես՝ մասնավոր հատվածին օժանդակելով, իր կողմից իրականացվող ներդրումային ծրագրի տարածքում, ապահովել անհրաժեշտ ենթակառուցվածքներ, ինչը կնպաստի ներդրումային ծրագրի կենսունակությանը (օրինակ, ներդրումային ենթածրագրերի մոտակայքում գտնվող հասարակական կառույցներ, ճանապարհներ/մայթեր, ջուր/ջրահեռացում, հաղորդակցություն և այլն): Նպատակն է ներդրողների համար ստեղծել ծրագիր իրականացնելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիություն առանց լրացուցիչ ծախսերի իրականացման, մասնավորապես՝ ճանապարհների, գազամատակարարման, էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման և ջրահեռացման միջոցով: Առաջարկվում է պետության կողմից անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցման միջոցով աջակցություն տրամադրել ներդրողներին՝ ՀՀ-ում ներդրումներ իրականացնելու նպատակով:

ՀՀ տարածքից բեռների արտահանման և/կամ ՀՀ տարածք ներմուծման նպատակով լոգիստիկ ծառայությունների ձեռք բերմանը աջակցություն միջոցառմանը նախատեսվում է հատկացնել 500,000.0 հազ. դրամ: Միջոցառմամբ նախատեսվում է բեռնափոխադրումների՝ ՌԴ-ից ՀՀ միակ գործող ցամաքային ուղուն այլընտրանքային՝ լաստանավով տեղափոխման ծախսերի փոխհատուցում, ինչը հնարավորություն կտա ՀՀ բեռնափոխադրող ընկերությունների համար սեզոնային բարձր գների ժամանակահատվածում բեռների տեղափոխմանն առնչվող լոգիստիկ ենթակառուցվածքներն առավել հասանելի դարձնել և նվազեցնել խոչընդոտները, խթանել միջազգային շուկա հայկական արտադրության ապրանքների արտահանումը, էականորեն մեծացնել բեռնափոխադրումների ծավալները: Միջոցառմամբ նախատեսված աջակցությունը խթան կհանդիսանա ՀՀ տնտեսության համար, ինչպես նաև արժանի մրցակցություն կապահովի Վերին Լարսին:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման, ներառականության և կայուն զարգացման ապահովման կարևորագույն գործոններից է: ՀՀ Կառավարությունը ձեռնարկատիրական գործունեությունն առանցքային է համարում կենսունակ մասնավոր հատված ունենալու համար և դիտարկում է այն որպես ներառական տնտեսական զարգացման, նոր ներդրումների ներգրավման և արտադրողականության բարձրացման հիմնական խթան: Ծրագրի բյուջեն կազմում է 160,092.5 հազ. դրամ, որն ուղղվելու է ՓՄՁ սուբյեկտների տեխնիկական, ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերմանը: Ծրագրի գծով նախատեսվում է մինչև 2025 թվականը ՓՄՁ հատվածի կշիռը ՀՆԱ-ում հասցնել 55%-ի, ինչպես նաև, հաշվի առնելով գենդերային բյուջետավորման սկզբունքները, պետական աջակցության իրականացման արդյունքում կանանց կողմից գրանցված ՓՄՁ-ների տեսակարար կշիռը 2023 թվականին հասցնել 40%-ի: ՓՄՁ զարգացումը խթանելու նպատակով ՀՀ Կառավարությունը 2020 թվականի օգոստոսին ընդունել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը», որը կնպաստի ՓՄՁ մրցունակության բարձրացմանը այնպիսի առանցքային ոլորտներում, ինչպիսիք են կարգավորող և ինստիտուցիոնալ դաշտը, ռեսուրսների, այդ թվում նաև ֆինանսների հասանելիությունը, շուկաների հասանելիությունը, մարդկային կապիտալի և ձեռնարկատիրական մշակույթի զարգացումը: Ռազմավարությամբ օժանդակություն կտրամադրվի մրցունակ և նորարարական ՓՄՁ-ների ձևավորմանը, հաշվի առնելով դրանց կարևորությունը COVID-19 համավարակի ավարտից հետո կայուն զարգացում ապահովելու և երկրում միջին խավի ձևավորման համար:

Տնտեսավարող սուբյեկտների համար իրենց գործունեությունը արդիականացնելու և արտադրողականությունը բարձրացնելու նպատակով հաստատվել է «Արտադրական կարողությունների արդիականացման» միջոցառումը, որի միջոցով տնտեսավարողները կարող են ձեռք բերել նոր մեքենա-սարքավորումներ վարկի/լիզինգի 6-10% սուբսիդավորմամբ: Միջոցառումը գործելու է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը: 2023 թվականին՝ սուբսիդավորում տրամադրելու նպատակով հաստատված բյուջեն կազմում է 8,233,900.0 հազ. դրամ:

Կարևորելով տնտեսության մեջ բարձր որակավորված մասնագետների ներգրավումը, որը կհանգեցնի տնտեսավարողների գործունեության արտադրողականության բարձրացմանը հաստատվել է «Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման» միջոցառումը, որով նախատեսվում է մասնակի փոխհատուցել տնտեսավարողների կողմից միջոցառման պահանջներին բավարարող մասնագետներին վճարված աշխատավարձերը: 2023 թվականին փոխհատուցում տրամադրելու նպատակով հաստատված բյուջեն կազմում է 1.5 մլրդ դրամ:

## ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

| Չափորոշիչը | Ելակետը | | Թիրախը | |
|---|---|---|---|---|
| | Ցուցանիշը | Ժամկետը | Ցուցանիշը | Ժամկետը |
| **ՓՄՁ կողմից արտադրված համախառն ավելացված արժեքի կշիռը ՀՆԱ-ում** | *24.6%* | *2018թ* | *55%* | *2025թ* |
| **Պետական աջակցության իրականացման արդյունքում կանանց կողմից գրանցված ՓՄՁ-ների թիվը** | *35%* | *2021* | *40%* | *2023* |
| **Տնտեսավարողների մոտ արտադրողականության աճ** | *51.5%* | *2021* | *80* | *2025* |

Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներին նախատեսվում է հատկացնել 300,000.0 հազ. դրամ: Ծրագրով հիմնականում նախատեսվում են գործարար համաժողովների կազմակերպում և մասնակցություն, արտերկրյա շուկաներում հայկական արտադրանքի առաջխաղացման օժանդակության ցուցաբերում, հայկական արտադրատեսակների վերաբերյալ տեղեկատվական բնույթի նյութերի պատրաստում:

«Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի խթանմանը, իրականացմանը և հետներդրումային սպասարկմանը» միջոցառման համար նախատեսվում է հատկացնել 300,000.0 հազ. դրամ, որը կուղղվի ներդրողների սպասարկմանը, ներդրումների խթանման աշխատանքների իրականացմանը, արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների կազմակերպմանը, օտարերկրյա ներդրողների ներգրավմանը և հետներդրումային սպասարկմանը:

## ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

*Ոլորտի/բնագավառի պետական ծրագրերը*

| | Ծրագրի անվանումը | 2023թ. բյուջե, հազ. դրամ | 2022թ. բյուջե, հազ. դրամ | Կշիռը ընդամենը ոլորտի բյուջեում, 2023թ % | 2023/2022թ. հազ. դրամ | 2023/2022 թ. % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն** | **9,967,192.5** | **10,766,307.5** | **16** | **(799,115.0)** | **(7.4)** |
| 2 | **Ներդրումների և արտահանման խթանում** | **5,850,000.0** | **653,600** | **10** | **5,196,400.0** | **895** |
| 3 | **Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում** | **30,803.4** | **28,023.4** | **0.1** | **2,780.0** | **109.9** |

## ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ

## 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ

- Ծրագրերի վերաբերյալ շահառուների իրազեկվածության բարձրացմանը,
- Ծրագրերի կարևորության, նպատակների, խնդիրների և սպասվելիք օգուտների/արդյունքների մասին հասցեական տեղեկատվության տրամադրմանը,
- Ծրագրերի վերաբերյալ ուղեցույցների, տեղեկատվական թերթիկների, տեսահալովակների առկայությանը, սոցիալական հարթակներով, հեռուստատեսությամբ գովազդի իրականացմանը,
- Ծրագրերից օգտված շահառուների հաջողված պատմությունների վերաբերյալ տեսահոլովակների պատրաստմանը և տարածմանը,
- Ծրագերից օգտվող շահառուների քանակի ավելացմանը:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Իրականացնել պետական աջակցության ծրագրերի հանրային իրազեկման լայնածավալ և շարունակական աշխատանք, հասցեական տեղեկատվություն տրամադրել յուրաքանչյուր ծրագրի կարևորության, նպատակների, խնդիրների և սպասվելիք արդյունքների մասին, բացատրել ծրագրերից օգտվելու օգուտները՝ հետաքրքրվածություն, շահագրգռվածություն առաջացնելով շահառուների շրջանում և ապահովելով վերջիններիս ներգրավումը գործընթացում: Իրականացվող ծրագրերի քանակը՝ 20, որոնց համար հատկացվել է 220,000.0 հազ. դրամ:

## ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Ծրագրերի և հաջողված պատմությունների վերաբերյալ տեղեկատվական նյութեր/անիմացիոն հոլովակներ (19), տեղեկատվական հոլովակներ(10) Տեղեկատվական գրքույկներ/թերթիկներ (8), Գովազդա-տեղեկատվական նյութեր (20)
- Billboard-ներ (11)
- SMS տեղեկացում (15)
- Լուսբանված միջոցառումներ (36)
- Հարցազրույցներ և հաղորդումներ (35)
- Բլոգերների ներգրավում (5)
- Երիտասարդական ամսագրերում հոդվածների տպագրում և պատվիրում (8)
- Արտաքին PR-ի իրականացում նախարարության և նախարարության ենթակա մարմինների գործունեության վերաբերյալ միջազգային հարթակներում (8)

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջության ոլորտի տեսլականն է ունենալ աշխարհում ճանաչելի, հասանելի, որակապես կայուն և առաջարկների բազմազանությամբ հարուստ զբոսաշրջային նպատակակետ, որտեղ այցելուները կզգան և կմասնակցեն Հայաստանի հնագույն մշակույթի, պահպանված բնության և կենսակերպի զարգացող պատմությանը: Զբոսաշրջության զարգացմանն ուղղվող ֆինանսական ռեսուրսները 2023թ. կկազմի 7,670,007.0 հազ. դրամ: Ծրագրի շրջանակներում Զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ կշարունակեն կազմակերպվել ավանդական փառատոններ, կապահովվի հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրումը, միջազգային համագործակցության շրջանակներում միջոցառումների կազմակերպում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև զբոսաշրջային վայրերի մուտքային 3 կմ ճանապարհահատվածի կառուցման, 1 զբոսայգու բարելավման և փողոցային լուսավորության թվով 500 սյուների ու լամպերի փոխարինման աշխատանքներ: Զբոսաշրջության աջակցության հետ կապված գործողությունների միջոցով կստեղծվեն 2100 ժամանակավոր և մշտական աշխատատեղեր, միջազգային 4 ցուցահանդեսների մասնակցություն, միջազգային 15 ճանաչողական

այցերի կազմակերպում, պետական աջակցություն 8 փառատոների կազմակերպմանը, աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական 6 կենտրոնների գործունեությանը, 2 միջազգային միջոցառման կազմակերպում: Հայաստանի զբոսաշրջային ճանաչելիության և մրցունակության մակարդակը, ինչպես նաև նպատակ ունենալով մինչև 2026 թվականը միջազգային այցելությունների թիվը հասցնել 2.5 միլիոնի:

## ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| 2019թ. | 2021թ. | 2022թ. | Նվազումը 2021թ/ 2019թ. համեմատ | Նվազումը 2022թ/ 2019թ. համեմատ | Աճը 2022թ/ 2021թ. համեմատ | 2023թ. | Աճը 2022թ. համեմատ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1.894.377 | 870,308 | 1,650,000 | - | - | 189 | 1.900 000 | 10% -ի աճի դեպքում |

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| 2019թ. | 2022թ. | 2023թ. |
|---|---|---|
| 1 515 մլն ԱՄՆ դոլար | 1 | շուրջ 1.520.0 մլն ԱՄՆ դոլար |

## ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

- ✓ *Բարելավել Հայաստանի դիրքերը զբոսաշրջության համաշխարհային քարտեզի վրա,*
- ✓ *Բարելավել զբոսաշրջության ոլորտի օրենսդրական դաշտը*
- ✓ *Բարելավել զբոսաշրջային ենթակառուցվածքները,*
- ✓ *Բարելավել մատուցվող ծառայությունների որակը,*
- ✓ *Բազմազանեցնել զբոսաշրջային առաջարկները,*
- ✓ *Ընդլայնել հասանելիությունը աշխարհի երկրների հետ*
- ✓ *Ընդլայնել զբոսաշրջիկների՝ Հայաստանում մնալու տևողությունը,*
- ✓ *Ընդլայնել ներքին զբոսաշրջության ծավալները,*
- ✓ *Կատարելագործել զբոսաշրջության կրթական և որակավորման համակարգը,*
- ✓ *Կատարելագործել վիճակագրական տվյալների հավաքագրման մեթոդը և ստեղծել տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմ*



## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Վիճակագրություն*

Վիճակագրական տվյալների հավաքագրումը, զբոսաշրջիկների կատարված ծախսերի ճշգրիտ տվյալների ստացումը և ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացումը, համադրումը և վերլուծությունը կիրառվում է հաջողված ծրագրեր/ռազմավարություն և ռազմավարական միջոցառումներ մշակելու համար: Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի բարելավմանը, այդ թվում զբոսաշրջային այցելությունների վիճակագրական 3-րդ հետազոտության իրականացմանը կուղղվի 9.0 մլն ՀՀ դրամ:

*Մարքեթինգ*

2023 թվականին միջազգային հարթակներում նախատեսվող միջոցառումներն ուղղվելու են Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը, այդ թվում.

Հայաստանի armenia.travel պաշտոնական զբոսաշրջային կայքի կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում՝ իրականացման համար նախատեսվում է 15.6 մլն ՀՀ դրամի չափով ֆինանսավորում:

Թվային և սոցիալական հարթակների վարում մարքեթինգային արշավների մշակման և իրականացման համար նախատեսվում է 49.0 մլն ՀՀ դրամի չափով ֆինանսավորում:

Հայաստանի 2023 թվականին նախատեսվում է Հայաստանի մասնակցությունը միջազգային հեղինակավոր զբոսաշրջային 4 ցուցահանդեսներին, որին կուղղվի 180 մլն ՀՀ դրամ:

Նախատեսվում է միջազգային և թիրախային առնվազն 4 ավիաընկերությունների հետ համագործակցության շրջանակում ձեռքբերել տարբեր մարքեթինգային ծառայություններ, որին կուղղվի 50 մլն ՀՀ դրամ:

2023 թվականին կկազմակերպվեն 5 «Road show»-ներ, 6 մարքեթինգային արշավներ և 8 ճանաչողական այցեր՝ հայտնի բլոգեր/վլոգերների, մեծ թիրախային լսարանով լրագրողների համար, որոնք կիրականացվեն «Աջակցություն զբոսաշրջության զարգացման» տարեկան ծրագրով՝ նախատեսված է հատկացնել 100 մլն ՀՀ դրամ, ինչպես նաև GIZ կազմակերպության ֆինանսական աջակցությամբ նախատեսված է հատկացնել 164 մլն ՀՀ դրամ:

Նախատեսվում է հայտնի ճամփորդական պարբերականների հետ համագործակցության նոր հնարավորությունների ստեղծում, որին նախատեսված է հատկացնել 54 մլն ՀՀ դրամ:

*Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում*

Համայնքներում զբոսաշրջության հավասարաչափ զարգացման, ծառայությունների բազմազանեցման և երկրորդային գրավչությունների բացահայտման հարցում մեծ դերակատարում ունեն զբոսաշրջային վայրերի, դեպի այդ վայրեր տանող ճանապարհների և հարակից ենթակառուցվածքների վիճակը: Բազմաթիվ բնության և մշակութային զբոսաշրջային գրավչություններ դուրս են մնում հիմնական առաջարկների ցանկից ոչ բավարար ներկայանալի միջավայրի և հասանելիության խնդիրների պատճառով: Ծրագրի շրջանակներում կշարունակվեն մեծածավալ շինարարական աշխատանքները զբոսաշրջային վայրերի բարեկարգման նպատակով: Շարունակվում են հետևյալ վերականգնողական աշխատանքները. Գյումրիում Խանջյան և Չայկովսկու փողոցները, Սբ. Ամենափրկիչ եկեղեցու հարակից այգու և հարող Աբովյան փողոցի աջ և ձախ հատվածները, Հաղթանակի պողոտան, Աճեմյան, Հանեսողլյան, Ջիվանի, Տերյան և Նալբանդյան փողոցները, Մարմաշեն վանական համալիր տանող ճանապարհը, Դեպի Տաթև տանող ճանապարհի շրջանցիկ հատվածը, Դվինի տարածքի բարեկարգում, ավտոկայանատեղի, տեղեկատվական կենտրոնի կառուցում, Արենի գյուղի գինու փառատոնի փողոցների հիմնանորոգում, Ջերմուկում Ջրվեժի մոտեցման ճանապարհի և ճեմուղիների վերականգնում, կամրջակի, ավտոկայանատեղիի և մայթերի կառուցում, Ըմպելասրահի ճեմուղիների վերանորոգում, տաղավարների տեղադրում և տեղեկատվական կենտրոնի կառուցում, Եղնիկի արձանին մոտեցնող ճանապարհի և դիտահրապարակի կառուցում, Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգում, Մեղրի Փոքր թաղի ժառանգության հանգույցի վերականգնում, Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում և հարակից տարածքի բարեկարգում, Գառնու տաճարի շրջակա տարածքի բարեկարգում: Ծրագրի նպատակի իրականացման համար 2023 թվականին նախատեսված է 6.25 մլրդ ՀՀ դրամի չափով ֆինանսավորում: 2023 թվականին աջակցություն կտրամադրվի 6 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններին, 3 զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպություններին (DMO), կկազմակերպվեն մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված 3 դասընթաց՝ Զբոսաշրջային ծառայություններ մատուցողների, հյուրընկալության ոլորտի աշխատողների և արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար, որի իրականացմանը կուղղվի 63.0 մլն ՀՀ դրամ:

*Ներքին տուրիզմ*

Զբոսաշրջության զարգացման ծրագրին կուղղվի 250.0 մլն ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակներում կշարունակվեն կազմակերպվել ավանդական փառատոներ, ներքին ցուցահանդես:

*Միջազգային համագործակցություն*

Միջազգային, տարածաշրջանային և այլ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության ապահովման, այլ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացման համար նախատեսվում է 120.0 մլն ՀՀ դրամի հատկացում: Համագործակցության միջազգային պայմանագրեր են գործում 32 երկրների հետ:

## ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

- ✓ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» տարեկան պետական ծրագիր
- ✓ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագիր
- ✓ «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) “Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում «ԵՄ-ն բիզնեսի

համար. Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի շրջանակներում մարքեթինգային միջոցառումների իրականացում:

*Ոլորտի/բնագավառի պետական ծրագրերը*

| | **Ծրագրի անվանումը** | **2023թ. բյուջե, հազ. դրամ** | **2022թ. բյուջե, հազ. դրամ** | **Կշիռը ընդամենը ոլորտի բյուջեում, 2023թ %** | **2023/2022թ. հազ. դրամ** | **2023/2022թ. %** |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Զբոսաշրջության զարգացում | 7,670,007.0 | 3,048,416.5 | 12 | 4,476,450.0 | 246.8 |

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

- ✓ բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունը և արդյունավետությունը,
- ✓ ապահովել սննդամթերքի անվտանգությունը,
- ✓ բարելավել պարենային անվտանգությունը և սնուցումը,
- ✓ զարգացնել տեղական շուկաները և ավելացնել արտահանման հնարավորությունները,
- ✓ զարգացնել մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները գյուղատնտեսության ոլորտում,
- ✓ աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը,
- ✓ խթանել թվային գյուղատնտեսությունը և տեխնոլոգիական նորարարությունները:

## ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Օգտագործվող վարելահողերի ավելացում՝ 50%-ի փոխարեն կօգտագործվի 65%–ը:
- ✓ Գյուղատնտեսական տեխնիկայի նորացում մինչև 3359 միավոր:

## ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագրի իրականացումը պայմանավորված է հողերի մասնատվածության մակարդակի կրճատման, արտադրողականության բարձրացման, բերրիության պահպանման ու բարձրացման, ներդրումների ներգրավման անհրաժեշտությամբ: Ծրագրով նախատեսվում է 2023-2025 թվականներին պետական աջակցության միջոցով խթանել գյուղատնտեսական նշանակության հողերի միավորմանը: Մասնավորապես, նախատեսվում է 30 հա և ավելի մակերեսով հողերի միավորման և ծրագրով նախատեսված աշխատանքների (հողերի մելիորացման և ջրավազանի կառուցման) կատարման համար այդ աշխատանքների ծախսերը փոխհատուցել 50%-ի չափով, սակայն ոչ ավելի, քան 200 հա մակերեսով միավորված հողերի վրա կատարված աշխատանքների համար: Յուրաքանչյուր շահառուի համար սահմանված՝ միավորված հողամասի յուրաքանչյուր 1 հա-ի գնահատված ընդհանուր ծախսերի առավելագույն սահմանաչափը 2,760.0 հազ. դրամ է: Առանձին գույքային միավոր հանդիսացող հողամասերի միավորների քանակը պետք է լինի 30-100 հա (100 հա-ը ներառյալ) միավորված հողամասի դեպքում առնվազն 10 միավոր, 100-200 հա (200 հա-ը ներառյալ) միավորված հողամասի դեպքում առնվազն 20 միավոր, որոնք չեն ներառում մինչև փոխհատուցման պայմանագրի կնքումը շահառուին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը: Ընդ որում մինչև փոխհատուցման պայմանագրի կնքումը շահառուին սեփականության իրավունքով պատկանող հողամաս(եր)ի ընդհանուր մակերեսի չափը չի կարող գերազանցել միավորված հողամասի ընդհանուր մակերեսի 20%-ը: Ծրագրի շրջանակում 2023 թվականին նախատեսվում է կոնսոլիդացնել 1000 հա հողատարածք, որի համար պետական բյուջեով հատկացվել է 1,380,000.0 հազ. դրամ:

---



Հայաստանի Հանրապետությունում հողային բարեփոխումների փորձնական ծրագրի նպատակն է տարբեր գործիքների կիրառմամբ (գյուղատնտեսական նշանակության հողերի ձեռքբերում, օտարում, միջնորդությունների իրականացում, փոխանակում) նպաստել հողերի միավորմանը (կոնսոլիդացիային), հողերի շուկայի զարգացմանը և հողերի օգտագործման մակարդակի բարձրացմանը: Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով մինչև 2023 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակը՝ ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան, Հայթաղ, Մայիսյան և Նորակերտ բնակավայրերում: «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագրին համապատասխան՝ հողերի ձեռքբերման, վաճառքի, վարձակալության և միջնորդության միջոցով իրականացնում է գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) ծրագրեր, այդ ծրագրերի շրջանակներում իր կողմից ձեռք բերված հողերի բարելավման աշխատանքներ, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքում է հողային գործարքների վճարովի մատուցման պայմանագրեր: Համաձայն ուսումնասիրությունների նախանշված 4 բնակավայրում չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 1400 հա, ծրագրի իրականացման

արդյունքում նախատեսվում է չօգտագործվող հողերի մակերեսը նվազեցնել 900 հա-ով: Ծրագրի շրջանակում 2023 թվականին պետական բյուջեով հատկացվել է 1,000,000.0 հազ. դրամ:

Շարունակվում է տնտեսավարողներին մատչելի պայմաններով գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումը, արդյունքում՝ մեքենատրակտորային հավաքակազմի աստիճանական նորացումը: Գյուղատնտեսության ոլորտում ծրագրի մեկնարկից մինչ 2022 թվականի դեկտեմբերի 1-ը ձեռք է բերվել 2361 միավոր նոր գյուղատնտեսական տեխնիկա, 2023 թվականին նախատեսվում է տեխնիկայի հավաքակազմը թարմացնել ևս 500 միավորով, որի արդյունքում էլ նպաստավոր պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական հողատարածքների արդյունավետ օգտագործման և ապրանքային արտադրության կազմակերպման համար: Ծրագրի շրջանակում 2023 թվականին պետական բյուջեով հատկացվել է 633,548.1 հազ. դրամ:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական կենսունակ համակարգի ներդրումը երկրի տնտեսության ագրարային հատվածի կայուն ու համաչափ զարգացման հիմնական նախապայմաններից է: ՀՀ մարզերում կշարունակվեն ծիրանի, խաղողի, դեղձի, խնձորի, սալորի, կեռասի և բալի այգիների և աշնանացան ու գարնանացան ցորենի, գարու և վարսակի, կարտոֆիլի, ձմերուկի և սեխի ցանքատարածությունների ապահովագրման պետական աջակցությունը՝ կարկուտ և հրդեհ, գարնանային ցրտահարություն ու երաշտ ռիսկերից: Միջոցառման շրջանակում 2023 թվականին նախատեսվում է ապահովագրել մինչև 10000 հա տարածք, իսկ ծրագրի մեկնարկից սկսած ապահովագրվել է շուրջ 14640 հա: Ծրագրի շրջանակում 2023 թվականին պետական բյուջեով հատկացվել է 739,927.1 հազ. դրամ:

Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը մեկնարկել է 2017 թվականի օգոստոս ամսից: Ծրագրի հիմնական նպատակը հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական հումք մթերող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումն է: Ծրագրի մեկնարկից սկսած մինչև 2022 թվականի նոյեմբերի 30-ը հաստատվել է 450 շահառուի 85256.2 մլն դրամի չափով վարկ, որոնց շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել են 55726 հատ բերքի գնման պայմանագիր, իսկ տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 7137.0 մլն դրամ: 2023 թվականին նախատեսվում է սուբսիդավորել ևս 50 շահառուի տրամադրվող վարկերի տոկոսադրույքները՝ 3,495,999.7 հազ. դրամ ֆինանսական միջոցների ներգրավմամբ:

Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիրը մեկնարկել է 2018 թվականի հուլիս ամսից: Ծրագրի հիմնական նպատակը ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է: Ծրագրի մեկնարկից սկսած մինչև 2022 թվականի նոյեմբերի 30-ը հաստատվել է 603 շահառուի 34365.1 մլն դրամի չափով լիզինգ, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 2174 միավոր սարքավորում, իսկ տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 3087.0 մլն դրամ: 2023 թվականին նախատեսվում է սուբսիդավորել ևս 40 շահառուի տրամադրվող լիզինգների տոկոսադրույքները՝ 2,004,699.8 հազ. դրամ ֆինանսական միջոցների հատկացմամբ:

ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2022-2023 թվականների» ծրագրի շրջանակներում վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նպատակով 2023 թվականի համար նախատեսվել է հատկացնել շուրջ 5,400,685.9 հազ. դրամ՝ 2021 թվականի օգոստոսից մինչև 2022 թվականը ՀՀ մարզերում թվով 30 շահառուի կողմից 500 հա մակերեսով հիմնված ու 450 հա մակերեսով հիմնվող ինտենսիվ այգիների և հատապտղանոցների, թվով 2 շահառուի կողմից 37.2 հա մակերեսի վրա տեղադրված և 130 հա հիմվող կարկտապաշտպան ցանցերի, թվով 1 շահառուի կողմից 3.18 հա մակերեսով հիմնված և 100 հա հիմնվող ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի և թվով 6 շահառուի կողմից 181 հա մակերեսով տեղադրված և 260 հա մակերեսով տեղադրվող ոռոգման համակարգերի համար: Ծրագրի շրջանակներում վարկերը շահառուին տրամադրվել են 2021 թվականի օգոստոսից մինչև 2022 թվականը 0 և 2 % տոկոսադրույքով:

2023 թվականին ծրագրի շրջանակներում վարկերը շահառուին կտրամադրվեն 5% տոկոսադրույքով, առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգերի ներդրման կամ ջրավազանների կառուցման կամ ընդլայնման համար՝ 2% տոկոսադրույքով, իսկ սահմանամերձ համայնքների, գյուղատնտեսական կոոպերատիվներին, զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիներին, գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդներին՝ 18-35 տարեկանը չլրացած ֆիզիկական անձանց, այգեհիմնման և (կամ) ոռոգման արդիական համակարգերի ներդրման դեպքում նաև գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրողներին վարկերը տրամադրվել են և 2023 թվականին կտրամադրվեն 0 % տոկոսադրույքով:

Ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման ընթացակարգով նախատեսվում է 2023 թվականին հիմնել շուրջ 50 հա ինտենսիվ պտղատու այգիներ, իսկ 100 հա տարածքներում ներդնել ոռոգման արդիական համակարգեր, որի համար նախատեսված է շուրջ 713,682.3 հազ. դրամ:

Այգեհիմնման նպատակով նախորդ ավարտված ծրագրով դեռևս շարունակաբար 2023 թվականի համար վարկերի սուբսիդավորման նպատակով նախատեսվել է հատկացնել շուրջ 2,443,484.7 հազ. դրամ դրամ՝ 2018 թվականից մինչև 2021 թվականը ՀՀ մարզերում թվով 88 շահառուի կողմից 1742.9 հա մակերեսով հիմնված ինտենսիվ այգիների և հատապտղանոցների հիմնման նպատակով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման համար: Ծրագրի շրջանակներում վարկերը շահառուին տրամադրվել են 2018 թվականից մինչև 2021 թվականը 5, 2 և 0 % տոկոսադրույքով: Նախկին ծրագրի փոխհատուցման բաղադրիչով ևս ծրագրի գործողության ընթացքում ներկայացված դիմում հայտերով նախատեսվում է հիմնել 85 հա ինտենսիվ պտղատու այգիներ և հատապտղանոցներ, որոնց համար փոխհատուցման ընդհանուր գումարը կկազմի շուրջ 462,500.0 հազ. դրամ:

---

Խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը, հայկական գինու ճանաչելիության բարձրացմանը գինեգործական արտադրանքի որակի բարելավմանը, վաճառքի ծավալների ընդլայնման և արտահանման ծավալների ավելացմանը կուղղվի 167,000.0 հազ. դրամ: Կազմակերպվելու են հայկական գինեգործության հանրահռչակմանը, հայկական գինիների առաջմղմանն ու արտահանմանն ուղղված 2 միջոցառում, որոնց մասնակցելու են գինու 25 գործարաններ:

ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ

ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2022-2023 թվականների» ծրագրի շրջանակներում 2023թ. նախատեսվում է կարկտապաշտպան ցանցեր տեղադրել 130 հա վրա: Այս նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը նախատեսվում է հատկացնել շուրջ 20,900.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսվում է մատչելի պայմաններով, մասնավորապես՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ, գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից կարկտապաշտպան ցանցերի տեղադրում, որը կհանգեցնի պտղատու և խաղողի այգիների կարկուտից արդյունավետ պաշտպանությանը, տնտեսավարողների եկամուտների պահպանմանը ու այգեգործության արդյունավետության բարձրացմանը: 2023 թվականին ծրագրի շրջանակներում վարկերը շահառուին կտրամադրվեն 0 և 2% տոկոսադրույքով:

Նախորդ ծրագրով դեռևս շարունակաբար վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նպատակով 2023 թվականի համար նախատեսվել է հատկացնել 20,845.5 հազ. դրամ 2018 թվականից մինչև 2021 թվականը ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերում թվով 11 շահառուի կողմից 118.3 հա մակերեսի վրա տեղադրված կարկտապաշտպան ցանցերի համար: Ծրագրի շրջանակներում վարկերը շահառուին տրամադրվել են 2018 թվականից մինչև 2021 թվականը 0 և 2 % տոկոսադրույքով:

2023 թվականին տոհմային տավարաբուծության զարգացմանը նախատեսվում է հատկացնել 217,892.4 հազ. դրամ: Միջոցառման նպատակը տավարաբուծությամբ զբաղվող տնտեսվարողներին վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային ԽԵԿ-ի ձեռքբերման խրախուսումն է, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում աճեցված տոհմային ԽԵԿ ձեռք բերելու համար վարկերը շահառուին կտրամադրվեն 2% տոկոսադրույքով, ներկրված ԽԵԿ ձեռք բերելու համար՝ 3% տոկոսադրույքով:Ծրագիրը նախատեսում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացնել տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների ձեռքբերման պետական աջակցություն, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել նախիրների տոհմային արժեքը և վերականգնել տոհմային գործընթացը տավարաբուծությունում: 2023թ. ձեռքբերվող տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների քանակը կկազմի 450 գլուխ: Ծրագրի շրջանակներում 2019-2022 թվականներին ձեռք է բերվել 1725 գլուխ տոհմային ԽԵԿ:

Շարունակական կլինի նաև «Խելացի» անասնաշենքերի կառուցման աջակցությունը: Ծրագիրն ուղղված է անասնապահական տնտեսությունների արդիականացման համար փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման, ինչպես նաև դրանց տեխնոլոգիական ապահովման համար պետական աջակցության տրամադրմանը, որը կնպաստի ինչպես պահվածքի պայմանների բարելավմանը, այնպես էլ՝ կաթնատվության մակարդակի բարձրացմանը, ինչն էլ կհանգեցնի արտադրողականության աճին, տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը և ճյուղի շահութաբերության մակարդակի բարձրացմանը: Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցությանը կուղղվի 315,000.0 հազ. դրամ: 2023 թվականի ընթացքում նախատեսվում է, որ շահագործման կհանձնավի ևս 21 անասնաշենք:

Հանրապետությունում տոհմային գործի զարգացումը խրախուսվում է մատչելի վարկավորման պայմանների կիրառման և ծախսերի փոխհատուցման միջոցով ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմամբ: ՀՀ-ում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացմանը աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռքբերման մատչելիության ապահովման նպատակով աջակցությունը իրականացնել 2 եղանակով՝ 1.տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռքբերման նպատակով տրամադրվող վարկերի տոկոսդրույքի մասնակի սուբսիդավորում, մասնավորապես վարկերը շահառուին կտրամադրվեն 2% տոկոսադրույքով, 2.կատարված ծախսի փոխհատուցում. կփոխհատուցվի ձեռքբերված տոհմային ՄԵԿ-ի արժեքի 23 տոկոսը: Ծրագրի երկու բաղադրիչներին 2023 թվականին նախատաեսվում

է հատկացնել համապատասխանաբար 89,517.9 հազ դրամ և 20,700.0 հազ. դրամ: 2023 թվականին նախատեսվում է ձեռքբերվող տոհմային մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակը հասցնել շուրջ 2700-ի:

2023 թվականին կշարունակվեն իրականացվել խոշոր եղջերավոր կենդանիների համատարած համարակալման և հաշվառման աշխատանքները: Ծրագրի իրականացման համար 2023թ-ին նախատեսվում է հատկացնել 499,099.5 հազ. դրամ: Նպատակը՝ հաշվառման և համարակալման համակարգի ներդրումն է, որը հանդիսանում է կարևոր գործիք ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման ինստիտուտի կայացման, կենդանիների տեղաշարժի նկատմամբ վերահսկողության, անասնաբուժասանիտարական տեսակետից բարձրորակ անասնապահական հումքի և մթերքի արտադրության ապահովման բարելավմանը, կենդանիների, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանության մակարդակի բարձրացման, տավարաբուծության տեղեկատվական հարթակի կատարելագործման, կենդանիների և կենդանական ծագման հումքի և մթերքի միջազգային առևտրի զարգացման համար նմանատիպ միջազգային ստանդարտներով կենդանիների պահպանության և օգտագործման պահանջների ներդաշնակեցման, ինչպես նաև ԽԵԿ ապահովագրական մեխանիզմների մշակման համար:

Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2023 թվականի պետական աջակցության ծրագրի հիմնական նպատակն է աշխարհաքաղաքական իրադրության, արտաքին սահմանափակումների, շրջանառու միջոցների թանկացման հետևանքների մեղմման, պարենային անվտանգության ապահովման համար 1 հա աշնանացան ցորենի մշակության ծախսերի, մասնավորապես սերմի, պարարտանյութի և դիզելային վառելիքի ձեռքբերման ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով նպաստել աշնանացան ցորենի ցանքատարածությունների ավելացմանը՝ նաև չմշակվող հողերի օգտագործման միջոցով, տեղական արտադրության ցորենի ծավալների և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը, ցորենի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է տրամադրել շուրջ 2,825,000.0 հազ. դրամի չափով փոխհատուցում:

## ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

**Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում ծրագրի գծով** 2023 թվականին նախատեսվել է հատկացնել շուրջ 633,913.2 հազ. դրամ: Ծրագրի նպատակն է բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի արդյունավետությունը: Նախատեսվում է ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում ներդնել ժամանակակից ոռոգման համակարգեր:

**Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն ծրագրի գծով** 2023 թվականին նախատեսվել է հատկացնել 626,176.4 հազ. դրամ: Ծրագրի նպատակն է բարելավել գյուղական ազգաբնակչության տնտեսական ու սոցիալական կարգավիճակը և ստեղծել զբաղվածության ապահովման կայուն մեխանիզմներ՝ զարգացնելով արտադրական համակարգերը և կապը ապրանքային մշակաբույսերի արտադրության արժեշղթային օղակների հետ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 4 համայնքներում իրականացնել ներդրումներ կայուն գյուղատնտեսական համակարգերում և տեխնոլոգիաներում, իրականացնել համայնքային հողերի էրոզիայի կանխարգելում:

### Աղյուսակ 9. Ոլորտի/բնագավառի պետական ծրագրերը

| | **Ծրագրի անվանումը** | **2023թ., հազ. դրամ** | **2022թ., հազ. դրամ** | **Կշիռը ընդամենը ոլորտի բյուջեում, 2023թ., %** | **2023/2022թ., հազ. դրամ** | **2023/2022թ., %** |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսության խթանում | 19,586,149.3 | 20,209,306.4 | 51.4 | (623,157.1) | (3.1) |
| 2 | Գյուղատնտեսության արդիականացում | 12,383,414.5 | 12,350,882.3 | 32.5 | 32,532.2 | 0.3 |
| 3 | Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն | 3,047,239.0 | 767,602.0 | 8.0 | 2,279,637.0 | 297.0 |
| 4 | Անասնաբուժական ծառայություններ | 1,837,174.5 | 2,240,635.2 | 4.8 | (403,460.7) | (18) |
| 5 | Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում | 633,913.2 | 1,741,082.7 | 1.7 | (1,107,169.5) | (63.6) |
| 6 | Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն | 626,176.4 | 1,284,366.8 | 1.6 | (658,190.4) | (51.2) |